

Ղազախստան

Առողջապահության բնագավառում համագործակցության համաձայնագիր է ստորագրվել 2018թ., հոկտեմբերի 25-ին, Աստանայում:

Ստորագրող կողմերն են՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը և Ղազախստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը:

Համագործակցության շրջանակներն են.

- համալիր առողջապահական ծառայությունների տրամադրում (ախտորոշիչ և բուժական)՝ ուղղված առողջության պահպանմանը և վերականգնմանը,
- դեղագործական գործունեություն,
- գիտական և բժշկական կադրերի պատրաստում,
- գիտական մշակումների համատեղ իրականացում,
- առողջապահության ոլորտում տեղեկատվական և հաղորդակցության համակարգերի մշակում և ներդրում,
- առողջապահական համակարգի բարեփոխումներ,
- փոխօգնություն և փոխգործակցություն տարածքի սանիտարական հսկողության միջոցառումների անցկացում պահանջող հատուկ վտանգավոր վարակների, վարակիչ (մակաբուժային) հիվանդությունների տարածման սպառնալիքի դեպքում,
- համագործակցություն Միջազգային բժշկասանիտարական կանոնների ներդրման ոլորտում,
- համագործակցություն մոռացված և էլիմինացված հիվանդությունների կանխարգելման ոլորտում,
- հիվանդների, այդ թվում՝ հաշմանդամների բժշկական վերականգնում,
- դեղամիջոցների ու բժշկական տեխնիկայի ստանդարտացում,
- Կողմերի պետությունների բնակչության առողջության պահպանման ու ամրապնդման ոլորտում ազգային ծրագրերի առաջնահերթ խնդիրների լուծում,
- բուժաշխատողների և առողջապահական մարմինների ու կազմակերպությունների ղեկավարների շարունակական մասնագիտական զարգացմանն աջակցություն,
- հանրային առողջության ոլորտում ազգային ռազմավարությունների, ծրագրերի և նախագծերի մշակման ու ամրապնդման նպատակով գիտատեխնիկական փորձի և տեխնոլոգիաների փոխանակում: